ԳԻՏԱԿԱՆ

ԱՐԻԶՈՆԱՅԻ ՔԱՐԱՑԱԾ ԱՆՏԱՌՆ

ԱՍՏԵՐՈՒՆ դեռ մինչև ցայսօր անծանօթ բնութեան հրաշալիք մի ի Միացեալ Նահանգս՝ է քարացեալ անտառն Արիզոնայի, որ Քալկեդոնի գրաբան (Chalcedony Park) անուանակոչութեամբ արդէն մեծապէս հռչակուած է առ Ամերիկացիս, և կը գտնուի Հօլբրուկէն 8½ հազարամետր հեռի՝ Ապաքեայ շրջակայքում։ Այս անտառիս ծառերը՝ ժամանակաւ կայծքարի և ագատի փոխուած, կը գտնուին հրաբղխային հողի մէջ մոխրոյ և լաւայի վերայ, որք 6–10 մետր թանձր խաւ մի կը կազմեն։ Քարացած ծառերու բունները՝ զգալի կերպով տափարակ երկրի մի վերայ պառկած են, և նոցանէ կազմուած զանգուածն միլիոնաւոր տակառաչափներ կը կշռէ։ Կան աստ և անդ կայծքարի փոխանցած բուներ, որոնք մինչև երեք մետր տրամագիծ ունին, և զորս կարելք բուսական աշխարհի ճշմարիտ հսկաներ անուանել, բաղդատելով Գոչէմիտի և Կալաւերասի զանգուածոց հետ՝ որ ի Գալիֆոռնիա։ Գոյացութիւնն՝ յորմէ կազմուած են կայծքարի փոխուած ծառերն՝ ոչ է սովորական կայծքարն կամ գայլախաղն, այլ անհամեմատ տեսքով ագատ, երբ յղկուած է, ծիրանի գօտւոյ բազմերանգ ճառագայթներ՝ թափանցկութեամբ կ'արտափայլեն յայնմ, բայց աւելի ակնախտիղ կերպով կը ցոլան դեղին և կարմիր գոյներն, և ևս քան զևս հիանալի կը յօրինեն զբաքացեալ զանգուածն։

Ներկայ նմանահան պատկերս՝ փոքր 'ի շատէ գաղափար կու տայ մեզ Քաղկեդոնի որսարանի քարացեալ փայտերու մեծդիութեան և առատութեան մասին, որ և կը ներկայացնէ բլրան մի (Թեասպար Հիլտ) վերին մասը։ Ի բնագրին կը գտնուին ևս ուրիշ կրկին պատկերք. յորոց մին կը ցուցընէ տեղւոյ մի անցքը, որ Քալիֆոռնի կոնոն կը կոչուի. իսկ միւսն կ'ընծայէ մեզ այն անսովոր աշխարհի հազուագիւտ տեսարաններէն մին. և այն իսկ է, բնութեան անձեռակերտ կամուրջն, որ ինն մետր երկայն և կազմուած է գայլախաղի փոխուած միակ ծառէ մի։ Դժուարին է ըսել, թէ այն ծառերէն որ տեսակին կը վերաբերէր այդ, որոնք աստ թաղուած են 'ի գերեզմանի կայծքարացման. յայտ է թէ խօսքերնիս նախաշրհեղեղեան անտառաց մասին։ Ամերիկացի գիտնական հանքաբանից կարծիքով, ի մէջ որոց յիշենք և Նիւ-

digitised by A.R.A.R.@

Եօրքի հմուտ ակնտվահառն Պ. Գէորգ Փ. Կունց, Արիզոնայի գայլախազի փոխուած անտառը՝ հանքաբանական աշխարհի հրաշալիք մի կը յօրինէ. և այս մասնագիտիս վկայութեան համեմատ, ասկէ հանուած յասպիսն և ագատը՝ բոլոր երկրիս վրայ եղածներէն աւելի գեղանցն է յիւրսեռին։ Ուրիշ տեղեր ևս յաճախ տեսնուած են արդէն քարացած փայտեր. բայց մինչև այժմ ոչ ուրեք երբեք երևցած այսպիսի մեծաքանակ առատութեամբ 'ի նմին տեղւոջ, և հանքաբանական այսպիսի հետաքրքրաշարժ կազմակերպութեամբ։ Պ. Հ. Դուդլէի մանրդիտական զննութեանց համաձայն, 'ի Նիւ-Եօրք, Քոլիֆոռնիէ օրսոռնի քարացած ծառոց ոմանց բնութիւնը՝ Աչոխլրիայ տեսակին կը թուի նմանել. իսկ այլք՝ վիրգինեան դիհոյ (Juniperus Virginiana) կը նմանցնեն.



Քաղկեդոնի որսարան

Արիզոնայի քարացած անտառը՝ ներկայումս հետազօտեց ամերիկացի Դրաքէնի ընկերութիւն (Drake Company), որ իւր հետազօտութեան յառաջ բերած արդիւնքն ևս ներկայացուց Պարիզի աշխարհահանդիսի մէջ (Միացեալ նահանգաց բաժնում), ուր կը գտնուէին յասպիս և ագատ, որոնք հաստատակաց տեսութիւնը կը գրաւէին. այսինքն է, ամբողջ բուներ և տախտակաձև կտրուած յղկեալ չերտեր, հիանալի գեղեցկութեամբ և իբրև արուեստագիտական մասնաւոր առարկաներ, որոց վերայ կը հրաւիրենք բնութեան եզականութեանց սիրահար անձանց ուշադրութիւն։

digitised by A.R.A.R.@